Քաղաքացիական գործ ԵԴ/7236/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13-ը մարտի 2023թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը /դատավոր Ա.Մկրտչյան/, ուսումնասիրելով «ՄՄՍ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի՝ գնահատող հանձնաժողովի 05.01.2023թ.թիվ 2 արձանագրային որոշումը՝ հայտը շտկելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և անվավեր ճանաչելու, և 16.01.2023թ. թիվ 3 արձանագրային որոշումը՝ հայտը մերժելու մասով որպես հետևանք, անվավեր ճանաչելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

«ՄՄՍ գրուպ» ՍՊ ընկերությունը 2023թ.հոկտեմբերի 12-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի՝ գնահատող հանձնաժողովի 05.01.2023թ. թիվ 2 արձանագրային որոշումը՝ հայտը շտկելու մասով, և 16.01.2023թ. թիվ 3 արձանագրային որոշումը՝ հայտը մերժելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումը 22.02.2023թ. մակագրվել է դատավոր Արամ Մկրտչյանին և 28.02.2022թ. հանձնվել դատավորի աշխատակազմին:

Դատարանի 02.03.2023թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է հայցվորին:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 07.03.2023թ., դատավորի աշխատակազմին է հանձնվել 09.03.2023թ.:

Դատարանն արձանագրում է, որ արձանագրված թերությունները վերացվել են, բացակայում են հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը, ուստի հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետկապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետմիաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ, եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2023թ.ապրիլի 20-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի պահանջել սույն որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման գործընթացի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա է:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.03.11 12:54:44 AMT